Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1636

17
Ч-23

1852

2010

17
Գ-23

ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՅՈՐԴՈՐ ՅԱՌԱՔԱԴԻՄՈՒԹԵԱՆ



Ի Պոլսոյ
Վենետիկեան Տպարանէն
Ի Հայոց 1852

~~ԱՄՍ~~
~~Ե 25~~

17
33434-Կ.Հ.
Շ-23
Ա

ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՅՈՐԴՈՐ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ

ԿԷ որ մէկը մտքով թեւաւորված թռչի՝ երթայ հասնի մինչուկ Հոմերոսին՝ Բինտարոսին՝ Պըզանտին՝ Տեմոսթենեսին ու Աբբիմաեսին սահնները • ու անկէց՝ նորէն եւ դառնայ մտքովը՝ քընելով անթիւ անհամար զարմանալու գործքերը՝ որ մարդկային միտքը արտադրեց ու երեւցուց աշխարհս վրա • ու զարմացած ըսելու ըլլայ թէ՝ ալ մեղի ու մեզմէ եւոքը գալիքներուն ընելու բան չէ մնացած, բայց եթէ նախնիքներէն սերմանված ու հնձվված արտերուն մէջ գեռինը ինկած անտես մնացած հատերը ժողվել • այսինքն պզտիկ ու չնչին գործքեր մեղի մնացած սեպելու ըլլայ • սա մարդը կցուցընէ որ ընդհանուր օրէնքները՝ որ աշխարհս կկառավարեն, ու մարդկային մտքին անսահման ձիրքերը՝ որովք բնութիւնը զինքը զարդարած ու պատուած է, չէ ճանչցած ու տգետ մարդ մըն է։

40/
16957-58
2001

Անցածին ու գալիքին մէջը գոնվելով ժամանակիս խմաստուններուն որին հարցընես թէ արդեօք հատուած՝ սպառեցան մարդուս մտաւոր գանձը • կամ թէ մենք ու մեզմէ եաբինները աս հայրենաւանդ ժառանգութիւնները՝ որ ունինք , պիտի վայելենք միայն՝ ալ գործ չունենալով ու չիկրնալով ընել ուսելցընել • կիմիագի ու գալիքը մէկ դի ձգելով՝ որ մլթութեան վարագուրով ծածկրված է մեզմէն , և անհամար պատճառներով ու գործքերով կցուցընէ քեզի համարձակ խօսելով՝ ու կրսէ , շատ դժուար բան է որոշելը թէ՝ յառաջադիմութեան յաղթանակը ու փառքը արդեօք որի՞ն կվայլէ • անցած դարերուն՝ թէ հիմակվան՝ կամ թէ գալիքին • և թէ արդեօք մինչուկ հիմայ գոնվածները շատ են՝ թէ մոացած ըլլալիք ու գոնվելիքները : Մինթէ երկրագնտին վրայ այլ աշխարհ չկայ մի գոնվելու՝ ինչպէս որ դատաւ Գոլոմպոսը • ամպերէն վեր երկինքին երեսը այլ օրէնք՝ այլ շարժուածք աստղներուն կամ նոր աստեղք չիկայ գոնրվելու Կալիլէոսին Նեվթոնին՝ Քեպլերին գտածներէն զատ • ով կրնայ մեզ հաստատելել թէ գիտութեան ձեռքովը այլ երկիր՝ այլ աշխարհ չի պիտի գոնվի • կամ ան աստղաբաշխներուն ցուցուցած սկզբունքներուն ու ծանօթու-

ՄԱՍԵՆԱՏԱՐԱՆ ԱԶԳՈՒՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՍՊԱՍԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՊՈՒՍԱԴՐԵԱԼ Ի ՀՕՐԱՍԱՆ 1871

թեանց ջահովը չի պիտոր ողջունենք օր մը նոր երկինք ու նոր աստղեր՝ որ անոնք չի տեսան, ու դեռ տեսնելիք չեն։

Հիմակվան բնական գիտութիւն ու ուսմունքը անչափ յառաջադէմ է՝ որ նոյն բնութիւնը կը զարմացնէ։ Երնայ ըսելիք. ու յայտնապէս կցուցնէ թէ իրաւ մարդուս մտաւոր կարողութիւնը անսահման է. թէ որ այլ օրէնք այլ կրօն՝ այլ հաւատք չլլայ յայտնվելու, բացատրել ու քարոզութեամբ տարածելու անչափ տեղ ունի մարդկային միտքը՝ որ հասցընել չկրնար. խմստասիրութեամբ յայտնված սկզբունքները բաղդատելով ու մօտեցընելով զգուշութեամբ բնական ծանօթութիւններուն ամէն կերպ գիտութիւնը անվնաս ուզղափառ վարդապետութեամբ կմեկնէ. նիւթական՝ բնապաշտ՝ համայնասաուած ոգիները՝ որ իրենց ցնորքներով աւրեցին՝ պղծեցին զուսումը, կջնջէ. լուսաւոր երկնային գիտութեան կենդանարար ջահը աւետարանին կհասցընէ հեռու տեղուանք մահվան ոգիտութեան խաւարին մէջ թաղված մնացողներուն. ու ասանկ հաղորդ կըլլայ մէկ կերպով մը փրկագործ արարչութեան Աստուծոյ մարդս իր խնամուն գործքերով։

Արարչագործ զօրութեան մէկ կայծ է մարդկային հանճարը, թէ կամք ունենայ՝ հրաշքներ կգործէ. կարողութիւն մին է՝ որ չափ սահման չունի, ինչու որ իր սահմանը անսահմանն է, այսինքն Աստուած։ Բայց ասոր կայծը պէտք է միշտ կենդանի մնայ, ապա թէ ոչ կմարի՝ կոչնչանայ՝ ինքզինքի կզբուցէ Տուզլեոս լատին իմաստասէրը. ասոր կարողութիւնը կրսէ, պէտք է որ զործածվի՝ բանվի՝ կրթվի՝ ու անգործ անպտուղ չենայ։ Մարդուս կամքը իշխան է՝ ամեն աշխարային զօրութիւններուն վրա կտիրէ. զանոնք բանեցնելով կգտնայ աշխարքիս ու բնութեան մէջ թաղուած գանձերը։ Բայց որովհետև ասոր կամքը չըշարժվիր առանց զրգռող պատճառի մը. չընթանար արտորնօք ան առաքինի ճամբան՝ որ իր առջին դրված է, թէ որ արժանաւոր ու շահաւէտ վախճան մը զինքը չզրդէ։ Իմաստունք ասոնց առջին կդնեն ուսումը՝ գիտութեանց տէր ըլլալը՝ որ շատ աղնիւ մասն է աստուածպաշտութեան՝ որ մարդուս կատարեալ ըլլալը կուզէ, որ կօգնէ ու կհասցընէ անոր իր երկնային վարդապետութեան լուսով։ Բայց տգէտը՝ երիտասարդք՝ մանաւանդ թէ տարիքով չափահաս մարդիկ ալ շատ հեղ չեն

ճանչնար , ինքոր պէտք է նէ , իրենց վախճանին բարձրութիւնը , մտաւոր ու բարոյական կատարեալութեան վսեմութիւնը . պէտք է իրենց այլ զրկիս ու յորդոր որ զրդէ՝ շարժէ կամքերնին . ասոր համար է՝ որ մեծամեծ խմաստուն մարդոց օրինակը՝ փառաւոր ու պատուած ազգերուն առջև անուններին , անոնց անմահ գործքերնին միշտ խթան ու յորդոր եղան ու արծարծեցին մարդուս սրտին մէջ եղած ան բնական ու սաստիկ նախանձին հուրը անոնց օրինակին նմանելու ։ Ասոր պատճառը չէ թէ միանակ մարդուս բնութեամբ նմանող ու օրինակի ետևէ գացող ըլլալն է , հապայ ևս առաւել մէկ զաղտնի ազդմունք մըն է՝ որ ամենքը ունին անձնասիրութեան . մեր հետը ծնած փափաք մը փառք վաստկելու համար . որ թէ չափով կամ օրէնքով գործածելի արդար է ու աղնուազգի . կրնայ մեծ մեծ գործքեր կատարել Աստուծոյ հաճոյ՝ իրեն ու ընկերութեան փառաւոր ու օգտակար ։ Ուստի ան սիրտ հատնում՝ որ կուենենք սովորաբար . ան օգտակար ամօթը՝ որ կկրենք , ան պոզուէտ նախանձը՝ որ ունինք , մի խմանար քեշ՝ վատ նախանձը՝ որ կհալէ կմաշէ սիրտը ուրիշին ունեցած բարիքներուն վրա . ան առաքինի նախանձը՝ որ

Պօղոս Առաքեալը կզարթուցանէր՝ արծարծել կու-
ղէր հաւատացեալներուն սրտին մէջ, հոգևորայ
նախանձաւոր լերուք ճշմարիտ կանչելով. ան նա-
խանձը կրսեմ՝ որ կրորոգէ չմաշելով, սրտին ուժ
կուտայ, մարդին կարողութիւնները կարթնցնէ,
հաստատ ու տևողական կամքով՝ ու այլ ամեն ճամ-
բով ունենալու ու ձեռք բերելու չունեցած բարիքը։
Աս անձնասիրութիւնը սուրբ է. գեղեցիկ է ասիս
փառասիրութիւնը. ասիս աշխատութիւնը իրաւունք
պատուոյ արժանի է. Աստուածային է ասիս նա-
խանձը։ պատերազմ մըն է՝ որ մենք մեզի կընենք
օգտակար նոյն բնութիւնէն յորդորված ու զրգռված,
երբեմն ներքին զգացմունքներէն՝ երբեմն արտա-
քին լուսաւոր օրինակէ երևելի ու մեծանուն մար-
դոց անցածներուն, ու հիմակ մեզի հետ ապրող-
ներուն։

Բնութիւնը այլ բան չէ, բայց եթէ բաղա-
դրութիւն մը զանազան ու հակառակ տարերքնե-
րով՝ որ փոփոխակի շրջանով մը կցուցնէ մեզի ասիս
գեղեցիկ ու միտք չիհասնելու կարգ ու կառավա-
րութիւնը բովանդակ աշխարհիս։ Երկինքին գուն-
տերը թէ որ վանողական ու ձգողական հակառակ
պատերազմող զօրութեամբ չիկառավարվին՝ անգործ

կենան ու անշարժ իրենց անսահման դաշտին մէջ. իրենց լուսովը ու ջերմութենով երկրիս պտղաբերութիւն չեն կրնար տալ. չեն կրնար զուարճացնել իրենց գեղեցիկ կարգովը, որ Պիւթագորաս առջինը եղաւ խմաստասիրաց մէջ տեսնող ու մեզի ցոյց տուող։ Տարերաց պատերազմին գործքը չէ՞ մի որ ծովին երեսը կշարժէ ալիքներով. որ ձիւնով՝ սառնամանիքով կպատէ լեռները ու դաշտերը. որ սաստիկ տաքութենով օդը ու երկիրը կրակ կը-դառցնէ. բարձր տեղուանք շանթերով կպատերազմի, բայց չի վնասէր. հապայ նոյն տարերքն են՝ որ սասնկ հակառակ գործքովնին կհարստացուցնեն երկիրը՝ որ կկանանչնայ՝ կծաղկի՝ ատենին պտուղ կուտայ, ու է՞ միշտ գեղեցիկ՝ զուարթ ինտոր ըստեղծուած ու եղած է՞ նէ Աստուծոյ ամենակարող ձեռքէն։

Սասնկ մեկ պատերազմով մը մարդուս միտքը՝ որ ամեն ստեղծուած զօրութիւններուն թագաւորն է, կհասնի ան մտաւոր կատարելութեան՝ որ աշխարքիս ամեն բանէն վեր է՞ բարձր ու վսեմ. ատոր համար պէտք չէ՞ նախանձին պատերազմն վախնալ։ Նոյն պատերազմը պէտք է ու խիստ օգտակար բարի վարքի ու աստուածպաշտութեան ալ. որովհետև

կամքերնիս ինչչափ Աստուծոյ մտոնոյ՝ անչափ պատերազմ ու սաստիկ հակառակութիւն կկրէ իր թշնամիներէն աշխարհքէն՝ մարմնէն՝ ու սատանայէն, ասոնց յաղթելովը սուրբ ու առաքինի կըլլայ։ Ասանկ ալ հիմակ մեր խօսքին դառնալով՝ խելքերը՝ որ բարձր վախճանի մը համար ստեղծված են սաստիկ կիրքերուն ալեկոծութենէն ու պատերազմէն շարժված. ան կիրքերը ըսել կուզեմ՝ որ մարդուս սրտին մէջ կզրգռեն անկուշտ բաղձանք մը դիտուն խմաստուն ու փառքի տէր ըլլալու՝ մինակ նախանձին խթանով զրդված կրնայ հասնիլ ու ելլալ լուսաւոր աթոռը խմաստութեան ու բարակ արհեստներուն. անանկ որ համարձակ կրնայ ըսվիլ թէ խիստ դժուար ու զրեթէ հնար չէ՛ որ մարդ կամ ազգ մը մենձ ու երևելի եղած ըլլայ աշխարհիս վրայ, կամ մենձ մենձ յիշատակվելու արժանի գործքեր ըրած ըլլայ, թէ որ առաջուց փորձված ու կորըճօրէն յաղթող դտնված չըլլայ երկար ու խիստ թշնամութիւններ կրելով։

Պատիժ ու պարգև՝ ասս երկուքն է կըսէ Սոզոն խմաստունը՝ որ ազգ խումբը գիտնոց խումբ կընէ. չէ՛ թէ ան պատիժը՝ որ մարմինը կտանջէ ու Աստուծմէ տրված ազնիւ ձիրքերը ընութեան կարէ

կրկրթացընէ , հապայ անիկայ՝ որ սիրով ու չա-
փաւոր խստութեանով խառնրված՝ տղին երեսը կը-
կարմրցնէ իր ծուլութեանը ու յանցանքին համար ,
ու զինքը կուզէ ամչցնելով , որտանց կուզէ ան՝
որ բերնովը կխոստանայ խրատուին . ան պարզեր՝
որին արժանի է տղոյն երկար աշխատութիւնը՝
ջանքը՝ թափած քրտինքը , ու անով կվարձատրվի .
անանկ որ՝ յոյս մը ծնանի անոր սրտին մէջ , յորդոր
մը փառքի ու պատուոյ . զրգռվի ետ չմնալու ,
հապայ առաջ երթալու ընկերաց մէջ ։ Գովեստը
կրսէ , Տուղլոս Կիկերոնը , սնունդ է արուեստա-
ներուն ու դիտութիւններուն . ասանկ բլլալը փոր-
ձով ալ յայտնի է , որովհետև ամենքը կյորդորվին
մենծ ու օգտակար գործքի մը ձեռք զարնելու փառ-
քի համար . ասոր հակառակը՝ ան բաներն որ փառք
մը չեն վաստկցներ՝ անկատար մնացած են մին-
չուկ հիմայ ։

Սթիլիքօնը անչափ պատուեցաւ Գլաուտիոսէն ,
անոր համար՝ որ յորդոր եղաւ ու առաջնորդ բարի
վարքի . կենդանացուց նախնեաց առաքինութիւն-
ները . ու իր ատենին աղվոր ու աղնիւ խելքերուն
համբայ բացաւ իրենց խելացութեան հանդէսը ցոյց
տալու աշխարքին առջև . հոգի ու կեանք եղաւ

դպրոցներուն . ուսանողաց ճակատը դափնի պսակով զարդարեց . անուններն ճանչցուց աշխարքին , նախանձելի բրաւ ու սիրուն իրենց ընկերներուն :

Ով որ անպիտան բան՝ կամ ինչաս կսեպէ հրապարակական փորձերը , դպրոցներուն վիճաբանութիւնը , խելքերուն մեկմեկու դէմ անինաս պատերազմիը՝ կցուցնէ թէ՝ ան նախնիքներուն մեծանուն պատմութեանցը տեղեակ չէ . ոդեստ է՝ չգիտէր մարդուս բնութեան ինչ ըլլալը :

Յունաստան նախանձելով ուրիշ ազգերուն վրա անչափ մեծ եղաւ ու երևելի . Հռոմ ան ատեն փայլելու ու մեծնալու սկսաւ՝ երբոր նախանձելով Յունաստանին՝ անոր գիտութեան ու արուեստներուն հետևեցաւ ու անոր փառքը յափշտակեց : Ամենէն եւեթ փառաւոր դարը Խաղաղացուց ազգին ան եղաւ , երբոր Ամէտիշիք՝ թագաւորական ցեղէն բացին իրենց գանձը . ու հարուստ պարգևներով՝ մասնաւոր ու հրապարակական ակադէմիաներ դնելով՝ ու կերպ կերպ պատիներ շնորհելով՝ ուսմանց նախանձը շարժեցին ամենուն սրտին մէջ . մտքերը սրվեցան , ու անչափ գրաւոր պատերազմ ու հակառակութիւնները օգտակար եղան տերութեան ու ազգին :

Այս երևելի օրինակներուն նաև էն երթալը՝ հեռևիլը՝ ով չտեսնար որ փառքի ու պարծանքի հասնիլ մըն է. առ հետևութիւնը չէ թէ մինակ մեզ օրինակին կհասցնէ. հապայ անկէց ալ էւել կըրնայ ընել առենով. առենով կըսեմ, ինչու ծիծաղելուրան էքիչ առենին մէջ ու տարիքով պզտիկ ազէ մը կատարեալ ու մեծամեծ գործքեր յուսալը՝ որոնք հաղիւ գրոց ու ուման մէջ մաշած խելքերը կարող են ընել, որովհետև խելքն ալ ունի իր կերպ կերպ տարիքը. ինտոր ամեն տարիքը իրեն յարմար մըտածմունք ու հաճութիւններ ունի սովորաբար. ով չպիտէր թէ ամեն բան պզտիկէն կսկըսի. զինուոր մը պատերազմին դաշտը չենջած. իր բերդին ու արժարանին մէջ կվարժվի կտրվի տարիներով զէնք շարժելը ու բանեցրնելը, ու նաքը քաջ զինուոր կըլլայ. Նաւարար մը մենծ բարձր ծովերը մեկէնիմէկ ճամբորդութեան չելլար՝ մինչուկ որ առաջ եղերքները ու մօտ տեղուանք չվարժըվի թիավարել. պզտիկ առագաստներ գործանել. ու զեակով ուղղել իր նաւակը։

Ապա թոմմալնի հոչակաւոր մատենագրին իմաստուն խօսքը ձեզի կուղեմ, ով ուսումնասէր մանկունք, թէև-ուշ ծնաք, բայց ձեր դարը ուս-

մամբ ու գիտութեամբ ծաղկած է ու երջանիկ։ ուսմունքին սէրը ու աս բարի նախանձը հարազատ եղբայր են։ մանաւանդ սէրը նախանձով կաճի ու կպտղաբերէ։ ձեր սիրտը երկուքին ալ օթեան ըլլա՛ մեկզմեկէ չերաժնըվին՝ ասրվեցէ՛ք որ մարդ ըլլաք, նախանձ ունեցէ՛ք՝ որ մենծ մարդ ըլլաք ատենով։ աս ճամբով օգտակար կըլլաք ձեր հայրենեացը՝ ազգին ու Աստուծմէ ձեզի տրուած քանքարը կ՚յարգէք ու կպատուէք։ ու Աստուծոյ կամքին համաձայն ապրելով՝ աշխարքին առջևն ալ անմահ կեանքով ձեր անունը կմնայ կապրի։

Հնար է որ չբաղձաք՝ չուզէք դուք աս կրկին կեանքը, երջանիկ ու փառաւորեալ երկինքը ու երկրիս վրա ալ։ ձեզի կախուած է ատիկայ։ ծուլութիւն ու ջանք՝ աս երկուքն են՝ որոնց մեկը կաւրէ, մեկալը կշինէ ամմեն գեղեցիկ ու մեծագործ շէնքը։

12

1636

Պ013

0025776